ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 27 >> դեկտեմբերի 2017թ. N 466

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 218 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի N 15/1220 գրությունը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2016 թվականի նոյեմբերի 21-ի «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլանը և պլանի հավելվածները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 512 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 218 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) Որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածը «Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության պլանը» շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***